Արձանագրություն N 3

«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան «17» նոյեմբեր 2017թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կոստանդյան (ԳՊ/ԳԱՊ)
անդամներ՝ Աշոտ Ավետիսյան (ԳՊ/ԳԱ)
Արթուր Թադևոսյան (ԳՊ/ԳԱ)
Իվան Խաչատրյան (ԳՊ/ԲԱ)
Արուս Ավետիսյան (ԳՊ/ԲԱ)
հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին</u>

1. Ընդունել ի գիտություն.
   1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ԷԼԿՈՄՊ»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:
   1.1 «ԷԼԿՈՄՊ»ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:
   1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:
   1.3. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

2. <u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-17/3»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԷԼԿՈՄՊ»ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

3 «ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվում «ԷԼԿՈՄՊ»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «ԷԼԿՈՄՊ»ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ անգործության ժամկետի ավարտից հետո:
4.2.Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Բաղաբերդի 28, «ՀԱՊՀ»Կապանի մ/6, հաշվապահություն հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Կոստանդյան

Անդամ՝ _____ Աշոտ Ավետիսյան

_____ Արթուր Թադևոսյան

_____ Արուս Ավետիսյան

_____ Իվան Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան